ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 482 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 110-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի փետրվարի 10-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնների ընդլայնում» ծրագրի մասին» N 110-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Դալբերգ» ընկերության հետ (Dalberg Global Development Advisors Ltd., Լոնդոն, Միացյալ Թագավորություն) 2026 թվականի հունիսի պատվերով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 28-ն ընկած ժամանակահատվածում արհեստական բանականության համար անհրաժեշտ հմտությունների խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ 96,543.70 ֆունտ ստեռլինգին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ատլասյան» ընկերության հետ (Atlassian Pty Ltd, Սիդնեյ, Ավստրալիա) 2026 թվականի հուլիսի 2-ի գնառաջարկով իրականացվող գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի հուլիսի 30-ից մինչև 2027 թվականի հուլիսի 30-ն ընկած ժամանակահատվածում համակարգչային ծրագրերի արտոնագրերի ձեռքբերում՝ 4,569.44 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հայասա հոսպիտալիթի գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02882029) 2026 թվականի հուլիսի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2026 թվականի հուլիսի 20-ից մինչև օգոստոսի 2-ն ընկած ժամանակահատվածում հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 270,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

06.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ